Հաստատում եմ՝

Երևանի Ստ. Զորյանի անվան թիվ 56

հիմնական դպրոցի տնօրեն Ս. Գալստյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

ԵՐ ԵՎԱՆԻ ՍՏ. ԶՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 56 ՀԻՄՆ.

ԴՊՐՈՑԻ 8- ա ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍՂԵԿ՝ Զ. Մուրադյան

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական, բարոյական- Կազմակերպել զրույցներ կյանքի, չարի, բարու, մարդասիրության, երախտագիտության, ներողամտության մասին՝ վկայակոչելով հայտնի մարդկանց կյանքը, ասույթները, մտքերը:
Հոգևոր դաստիարակություն Նպաստել աշակերտներին ազգային ոգով դաստրարակելուն՝պատմելով ազգային սովորույթների, ծեսերի, ազգային հերոսների, հայ մարդու վարքի և ապրելաձևի, հոգեբանության մասին;Զրուցել ազգային տոների մասին՝կազմակերպելով միջոցառումներ, զեկուցումներ ազգային արժեքների մասին:
Գեղագիտական Կազմակերպել զրույցներ գրականության, կերպարվեստի,երգ ու պարի մասին՝ներկայացնելով հայ գրողներին,հայ երգի երախտավորներին,կերպարվեստի երախտավորներին՝ լսելով երգեր, դիտելով նկարներ, տեսանյութեր:
Ֆիզիկական առողջության

Սովորեցնել հետևել անձնական հիգիենային, պատրաստ և մաքուր հաճախել ֆիզկուլտուրայի դասերին, կատարել ֆիզիկական վարժություններ՝հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունը և անհատի հնարավորությունները:
Աշխատանքային դաստիարակություն Հետևել և նպաստել աշակերտների ինքնակրթությանը և ինքնազարգացմանը, խթանել նրանց ակտիվ մասնակցությանը արտադասարանային, արտադպրոցական միջոցառումներին;Սովորեցնել սովորել, ինքնուրույն աշխատել:
Իրավական դաստիարակություն Սովորեցնել լինել կարգապահ, կատարել դպրոցի կանոնադրության պահանջները, կարողանալ պաշտպանել անձնական շահերը, դպրոցի շահերը, ընտանիքի և պետության շահերը;Լինել հավատարիմ օրենքով սահմանված կարգին:
Բնապահպանական դաստիարակություն

Կազմակերպել զրույցներ շրջակա բնության պահպանության անհրաժեշտության մասին, խոսել բնության բարիքների, հասարակության և բնության անքակտելի կապի մասին:Մասնակցել դպրոցամերձ հողամասը խնամելու, բույսեր աճեցնելու, ծառերը խնամելու գործին:
Ռազմահայրենասիրական դաստիարակություն Կազմակերպել զրույցներ հայրենիքի, հայրենի տան, բնության մասին՝խոսելով դրանց պահպանության և պաշտպանության անհրաժեշտության մասին՝վկայակոչելով մեր նախնիների քաջ անցյալը, հերոսական պատմությունը:
Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն,դառնան ընտանիքին, հայրենիքին պիտանի մարդիկ:*

ՈՒՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
4.09-8.09	Կազմակերպչական հարցեր զրույց դասապատրաստման մասին;«Ինչպես պաշտպանվել աղետներից» զրույց:	4.09	Դասղեկ
11.09-15.09	Աշխորհրդի անդամների ընտրություն, դասարանի ավագի ընտրություն, հերթապահության սահմանում,	11.09	Դասղեկ
18.09-22.09	Զրույց «Անկախության ճանապարհը» թեմայով՝ նվիրված ՀՀ Անկախության օրվան	18.09	Դասղեկ
25.09-29.09	Կարգապահական հարցեր «Հեռուստացույցի և համացանցի դերը իմ կյանքում» զրույց	25.09	Դասղեկ
2.10- 6.10	«Պեպո» ներկայացման դիտում Օրագրերի, տետրերի ստուգում	2.10	Դասղեկ
9.10-13.10	Առանձնազրույց տղաների հետ Առաջադիմության ստուգում, զրույց հետ մնացող աշակերտների հետ	9/10	Դասղեկ
16.10-20.10	Ինչպես անցկացնել ազատ ժամանակը. ընթերցանության դերը անհատի կյանքում	16.10	Դասղեկ

30.10- 3.11	*Առանձնազրույց աղջիկների հետ անձնական հիգիենայի մասին*	*30.10*	*Դասղեկ, բուժքույր*
6.11- 10.11	*«Հարգանքը և բարի վերաբերմունքը ծնում են հոգու խաղաղություն» զրույց*	*6.11*	*Դասղեկ*
13.11- 17.11	*Հանդուրժողականությունը ընկերական ,բարեկամական հարաբերություններում*	*13/11*	*Դասղեկ*
20.11-24.11	*Առաջադիմության հարցեր,զրույց ուսուցիչների, աշակերտների հետ։Հայ գրողները աշնան մասին* *Բանաստեղծությունների ընթերցում*	*20.11*	*Դասղեկ*
27.11- 1.12	*«Ես սիրում եմ իմ հայրենիքը»նկարում են աշակերտները,* *պատմում իրենց նկարների մասին*	*27.11*	*Դասղեկ*
4.12-8.12	*Զրույց «Անվտանգ երթևեկության կանոնները»* *Զրուցել հետ մնացող աշակերտների հետ*	*4.12*	*Դասղեկ*
11.12-15.12	*Մարդը և քաղաքավարության կանոնները* *Հետևել դասարանի մաքրությանը, հերթապահությանը*	*11.12*	*Դասղեկ*
18.12- 22.12	*Ամանորյա հանդես*	*18.12*	*Դասղեկ*
8.01-15.01 2023	*Կազմակերպչական հարցեր, տետրերի, օրագրերի ստուգում, ծնողական ժողովի նախապատրաստում*	*12.01*	*Դասղեկ*
15.01- 19.01	*«Ինչ է նշանակում հերոսություն» զրույց*	*18.01*	*Դասղեկ*

22.01- 26.01	Հայոց բանակի օրվա առթիվ կազմակերպել զրուց « Զեկուցում են աշակերտները»	26.01	Դասղեկ
29.01- 2.02	Բանավեճ «Ընկերությունն »	1.02	Դասղեկ
5.02- 09.02	Երգ-երաժշտությունը մարդու կյանքում. Ավ. Իսահակյանի «Երգի հրապույրը» ստեղծագործության քննարկում	8.02	Դասղեկ
12.02- 16.02	Հայկական ազգային ծեսեր՝Տերնտես.աշակերտները կպատմեն Տերնտեսի մասին	15.02	Դասղեկ
19.02- 23.02	Գրքի նվիրատվության օրվա և Մայրենիի օրվա առթիվ Կազմակերպել գրքի նվիրատվություն, բանաստեղծությունների ընթերցում Մայրենիի մասին	19.02. 21.02	Դասղեկ
26.02- 1.03	Զրույց «Ինչպես կոփել մարմինը », զրուցել նաև ձեռքերի մաքրության , դիմակ կրելու դեպքերի մասին	29.03	Դասղեկ
4.03-07.03	ՍյցելությունՉարենցի ըուն- թանգարան, տպավորությունների քննարկում	9.03	Դասղեկ
11.03-15.03	Աղջիկների և տղաների փոխհարաբերությունները, հարգանքի, ասպետական վերաբերմունքի դրսևորում	15.03	Դասղեկ
18.03-22.03	Հայոց ազգային տոները՝Բարիկենդան	22.03	Դասղեկ
1.04- 05.04	Մայրության և գեղեցկության տոնը, տոնի խորհուրդը	5.04	Դասղեկ

08.04-12.04	Խաղաղության պաշտպանները«Զինվոր եմ ես» Առաջադիմության հարցերի քննարկում	12.04	Դասղեկ
15.04-19.04	Մեծ եղեռնը հայոց պատմության քառուղիներում,ցեղասպանության արդի դրսևորումները	19.04	Դասղեկ
22.04-26.04	Գեղագիտական դաստիարակություն՝Կոմիտաս	26.04	Դասղեկ
19.04- 03.05	Աշխատանքը գոյության պայմանն է, աշխատանքի դերը մարդու կյանքում	3.05	Դասղեկ
06.05-10.05	Մայիսյան հաղթանակներ և պարտության դառնությունը	10.05	Դասղեկ
13.05-17.05	Ծաղկազարդ.կրոնական տոներ	17.05	Դասղեկ
20.05-24.05	Ընթերցելու հաճույքը.ամառային ընթերցանություն	24.05	Դասղեկ

Դասարանի սոցիալական անձնագիրը

Դասարան_8-ա

Դասղեկ__ Ջ. Մուրադյան

Երեխաների թիվը դասարանում__30 աշակերտ

ա) աղջիկ - 17
բ) տղա - 13